ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ 208-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «11» «04» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ն. Նազարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը և ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 214-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11013. Հայ կինոյի հիմնադրման 100-ամյա հոբելյանական միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Հանդիսավոր երեկո») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել Հայ կինոյի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական «Հանդիսավոր երեկո» նախագծի կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու

[illegible]ից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ [illegible]այտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության,

մանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,
2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,
2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,
2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 10 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 57520,8 հազար (հիսունյոթ միլիոն հինգ հարյուր քսան հազար ութ հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:
3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետում նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. ապրիլի 17-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:
4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):
5.2. Ծրագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները չեն կարող ներառվել 27.02.2023 թ. դրամաշնորհի տրամադրման N ՄՇԴ-51-2023 պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Մաշտոցի 46
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հ/հ 900018001451, հվհհ 02508792
Հ/Հ 900011042638, հվհհ 02698732	հեռ. 010567438
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Հ. Հակոբյան	Ռ. Լազարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«11» «04» 2023 թ.
N ՄՇԴ-208-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Հայ կինոյի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական «Հանդիսավոր երեկո» նախագիծ

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, Երևան 0002, Մաշտոց 46
3	Ծրագրի անվանում	Հայ կինոյի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական «Հանդիսավոր երեկո»
3.1		Սույն թվականի ապրիլի 16-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում նախատեսվում է իրականացնել Հայ կինոյի հիմնադրման 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառում: Թատրոնի ճեմասրահում նախատեսվում է ապահովել կինոնակարահանման մթնոլորտ՝ հագեցած հայ կինոյի պատմության վավերագրերով, տեսախցիկներով, սարքավորումներով, ինչպես նաև՝ թեմատիկ հուշանվերների ու կինոգրականության ցուցադրություն-թանգարանի առկայություն: Ճեմասրահում բուն միջոցառումից առաջ տեղի կունենա արարողակարգային ծրագիր, որտեղ կմեծարվեն ու գնահատանքի կարժանանան մեր ժամանակների նշանակալի ավանդ ունեցող կինոգործիչները: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել «խոսող» էկրանի միջոցով, որը միջոցառման ամբողջ ընթացքում «կշփվի հանդիսատեսի հետ» և առաջին դեմքով կպատմի, կներկայացնի իր անցած ուղին ու սպասումները: Կխոսի նաև վավերագրական կինոյից ու կինոհամերգներից, ինչպես նաև իր կրտսերի՝ մուլտ միավորման 85 ամյակից: Տեքստերը համեմված կլինեն ֆիլմերի նշանավոր ու հիշվող մեջբերումների յուրօրինակ ու միմյանց հաջորդող, փոխլրացնող հատվածների մոնտաժով: Համերգային ծրագիրը հագեցված կլինի կինոերաժշտության պոպուրիներով, որոնք կուղեկցվեն կինոնկարահանման հրապարակների աշխատանքային տեսաշարերով ու ֆոտոշարքով: Այդ օրը առաջին անգամ հանրությանը կներկայացվեն Համո Բեկնազարյանի «Երկիր Նաիրի» համր ֆիլմի վերականգնված տարբերակից հատված, որը կուղեկցվի հատուկ ստեղծված երաժշտական համահունչ մեղեդիներով, կենդանի

		նվագակցությամբ: Հոբելյանական երեկոյին դիրիժոր Հարություն Արզումանյանի ղեկավարությամբ կմասնակցի Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, հանդես կգան «Հովեր» պետական կամերային երգչախումբը, Հայաստանի հանրային ռադիոյի «Արևիկ» մանկապատանեկան երգչախումբը և Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլը:
3.2	Նպատակ	Հայ կինոյի հարյուրամյա պատմությունը ներկայացնել հայ հանրությանը և աշխարհին՝ նպատակ ունենալով մոռացության չմատնել մշակութային ժառանգ համարվող, կարևոր ձեռքբերում և ազգապահպան նշանակություն ունեցող հայ կինոն, կինոյի պատմությունը:
3.3	Անցկացման ժամկետ	Ապրիլի 16, 2023 թ.
3.4	Անցկացման վայր	ք. Երևան, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն
3.5	Ակնկալվող արդյունքներ	Հայ կինոյի անցած ճանապարհի ներկայացում, հայտնի կինոգործիչների արժեվորում: Հոբելյանական տարվա հանրահռչակումը խթան կհանդիսանա հայ կինոյի ոլորտում հետագայում նոր և լավագույն դրսևորումների:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	1 հանդիսավոր երեկո - համերգ, 1070 հանդիսատես

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011042638, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
------------------ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018001751, հվհհ 02508792
հծհ 010567438
Տնօրեն՝
------------------ Ն. Ղազարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«11» «04» 2023 թ.
N ՄՇԴ-208-2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայ կինոյի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական «Հանդիսավոր երեկո» նախագծի կազմակերպման ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)* *				**12875.0**
	Ծրագրի տնօրեն	մարդ	1	400000	400.0
	Բեմադրող ռեժիսոր	մարդ	1	1100000	1100.0
	Ռեժիսորի ասիստենտ	մարդ	1	220000	220.0
	Տեխնիկական ռեժիսոր	մարդ	1	210000	210.0
	Երաժշտական մասի պատասխանատու խմբագիր	մարդ	1	690000	690.0
	Կինոերաժշտության 16 գործերից կազմված պոպուրիի գործիքավորող, անցումներն իրականացնող	մարդ	1	620000	620.0
	Մուլտերաժշտության պոպուրիի գործիքավորող, անցումներն իրականացնող	մարդ	1	620000	620.0
	Բեմանկարիչ ձևավորող	մարդ	1	475000	475.0
	Հաղորդավարական սցենարի հեղինակ	մարդ	1	410000	410.0
	Նվագախումբ՝ ներառյալ հրավիրյալ երաժիշտներ (միջին)	մարդ	60	92500	5550.0
	Մենակատար	մարդ	3	210000	630.0
	Հաղորդավար	մարդ	2	275000	550.0
	Համակարգող	մարդ	5	200000	1000.0
	Համակարգող (գնումների, ֆինանսական)	մարդ	2	200000	400.0
2	**Հյուրերի ճանապարհածախի և կեցության ծառայություններ**				**3747.5**
	Ավիատոմսեր				*2347.5*
	Լոնդոն-Երևան-Լոնդոն (միջին)	հատ	2	364000	728.0
	Փարիզ-Երևան-Փարիզ	հատ	1	505000	505.0
	Մոսկվա-Երևան-Մոսկվա	հատ	1	181500	181.5
	Վարշավա-Երևան-Վարշավա	հատ	1	151000	151.0
	Թեհրան-Երևան-Թեհրան (միջին)	հատ	3	215000	645.0
	Թբիլիսի-Երևան-Թբիլիսի	հատ	1	137000	137.0
	Հյուրանոց (միջինը 36 սենյակ/օր)	*հատ*	*1*	*1080000*	*1080.0*
	Սենդի կազմակերպում (10 մարդ, 4 օր)	*հատ*	*1*	*320000*	*320.0*
3	**Տպագրական ծառայություններ**				**220.0**
	Հրավիրատոմս ծրարով	հատ	1100	200	220.0
4	**Տրանսպորտային ծառայություններ**				**492.0**
	Հյուրերի դիմավորում, ճանապարհում (Երևան-օդանավակայան-Երևան), ներքաղաքային տեղափոխում (3 օր)	հատ	1	492000	492.0

5	**Կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցում՝** Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն	հատ	1	1600000	**1600.0**
6	**Բեմի դեկորացիաների, լուսային, ձայնային տեխնիկայի, ԼԷԴ էկրանների ապահովման, մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման ծառայություններ**				**21,977.5**
6.1	**Բեմի դեկորացիայի ծառայություն, այդ թվում՝**	**հատ**	**1**	**2110000**	**2110.0**
	Բեմահարթակ շարժական՝ երաժշտական խմբերի համար (լայն.3 մ, խորութ. 2մ, բարձր. 0,2 - 0,4 մ), բեմական դեկորացիաներ՝ շարժական դեկորներ	հատ	5	100000	500.0
	Ալյումինե կոնստրուկցիա 26 մ երկարությամբ նախատեսված ԼԷԴ էկրանները կախելու համար	հատ	38	6316	240.0
	Բեմի հատակի լինոլիումե ծածկ	ք.մ.	200	1000	200.0
	էլ կախիչներ Prolyte Prolift 1T	հատ	8	53750	430.0
	Էլեկտրական ճախարակ (500 կգ)	հատ	24	20000	480.0
	Բեմային կոնստրուկցիա մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման աշխատանքներ	հատ	1	260000	260.0
6.2	**Լուսային տեխնիկայի ապահովման, մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման ծառայություն, այդ թվում՝**	**հատ**	**1**	**4857500**	**4857.5**
	Շարժվող լուսատու սարք FineArt Fine 440 BBSW 20R	հատ	24	25000	600.0
	Շարժվող լուսատու սարք FineArt Fine 330 Beam 16R	հատ	30	31250	937.5
	Շարժվող լուսատու սարք FineArt Fine 1519 pixie RGBW	հատ	24	27500	660.0
	Շարժվող լուսատու սարք PR lighting XLED 2007	հատ	30	31250	937.5
	Լազերային սարքեր	հատ	2	100000	200.0
	Լույսերի կառավարման վահանակ Grand MA 2 Full size	հատ	1	750000	750.0
	Մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ	հատ	1	772500	772.5
6.3	**Ձայնային համակարգի ապահովման, մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման ծառայություն, այդ թվում՝**	**հատ**	**1**	**3620000**	**3620.0**
	Բարձր հաճախականությունների բարձրախոս Adamson systems S 10	հատ	8	62500	500.0
	Ցածր հաճախականությունների բարձրախոս Adamson	հատ	4	177500	710.0
	Բարձրախոս նախատեսված բեմահարթակի լսելիությունը ապահովելու համար Fidek FMS 115	հատ	8	71250	570.0
	Ձայնի ղեկավարման վահանակ Allen&Heath Dlive S5000 հարակից սարքերով որոնք ապահովում են 128 ֆիզիկական մուտքի և 64 ելքի հնարավորություն	հատ	1	450000	450.0
	Նվագախմբի համար նախատեսված խոսափողներ	հատ	68	5441.17	370.0
	Անլար խոսափող հաղորդավարների և հյուրերի համար Shure Beta 58	հատ	5	60000	300.0
	Մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման աշխատանքներ	հատ	1	720000	720.0

6.4	**ԼԵԴ էկրանների ապահովման, մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման ծառայություն, այդ թվում՝**				**11390.0**
	ԼԵԴ էկրաններ 4 մմ խտությամբ նախատեսված դրսում և ներսում աշխատելու համար 19մ լայնությամբ 8 մ բարձրությամբ և ճեմասրահում 4մ լայնքով 2.5 մ բարձրությամբ կառավարման վահանակներով	ք/մ	162	60000	9720.0
	Մոնտաժման, սպասարկման և ապամոնտաժման աշխատանքներ	հատ	1	1670000	1670.0
7	**Այլ կազմակերպական ծառայություններ**				**7022.0**
	Ֆիլմ-տեսաշարի սցենարի պատրաստում	հատ	1	600000	600.0
	Ֆիլմ տեսաշարի մոնտաժում և պատրաստում	հատ	1	800000	800.0
	Ֆոտոարխիվի ձեռքբերում, թվայնացում մշակում	հատ	1	150000	150.0
	Խորհրդատու կինոգետի աշխատանքներ	հատ	1	150000	150.0
	Երաժշտական հատվածներին ուղեկցող տեսաշարերի և էֆեկտների մոնտաժ	հատ	1	600000	600.0
	Ձայնագրման ստուդիայի վարձակալում	հատ	1	200000	200.0
	Ժող գործիքների նվագարանների համույթ	հատ	1	500000	500.0
	Երգչախումբ	հատ	1	400000	400.0
	Մանկական երգչախումբ	հատ	1	350000	350.0
	Հայ կինո-100 լոգոտիպի պատրաստում և հրավիրատոմսերի դիզայն	հատ	1	250000	250.0
	Սինխրոն թարգմանության ապահովում *(ներառյալ տեխնիկա և այլ պարագաներ)*	հատ	1	800000	800.0
	Թեմատիկ ցուցահանդեսի կազմակերպում ճեմասրահում՝ ֆիլմեր, թեմատիկ ցուցանմուշներ, գրքեր և այլն, (մոլբերտներ, տումբաներ, ցուցափեղկեր, կոնստրուկցիաներ, կոնստրուկցիայի հավաքում պաստառների ցուցադրության համար և այլն)	հատ	1	2222000	2222.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**47934.0**
	ԱԱՀ**				**9586.8**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**57520.8**

***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

** **ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042638, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001751, հվհհ 02508792
հծհ 01056?438
Տնօրեն՝
Ս. Նազարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«11» «04» 2023 թ.
N ՄՇԴ-208-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«11» «04» 2023 թ
N ՄՇԴ-203-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝